Թովմաս իւր ընկերների հետ մնում է երկու տարի հուշակաւոր վարժապետի մօտ. «և սկսաւ ուսուցանել (Տաթևացին) զգիրս արտաքին իմաստասիրացն։ Եւ ապա զչորեքտասան Թուղթն Պողոսի առաքելոյն և զԱռորս գիրս աստուածաբանին Գրիգորի»։ Մենք միջոց ունինք մասամբ գաղափար կազմելու այս դասախօսութիւնների մասին. որովհետև անոնք գրի են առնուած և մեր

Հեռ. Մատ. Ս. Էջմ. № 2153/2143 յիշատակարաններ 105. 273ա. 299ա. 378բ. 452ա, 486բ—487բ։

2. Մկրտիչ Նահապետենց (հօր անունով), կոչուում է եւ Մեծոփեցի, իւր ամբողջ կեանքում Թովմայի գործակիցը լինելով նոյն վանքում. Թովման եւ սա իրենց յիշատակարանների մէջ փոխադարձաբար իրար «հոգեւոր հարազատ» են անուանում։ ՊԿԵ (=1417) Թուին Երուսաղէմից վերադարձին հետը բերում է Մեկնութիւնների մի ժողովածու (մեր մատենադարանի № 1429/1419), որպէս զի դաս առեն նորա վերայ եւ Թովման առաջինն է, որ կատարում է նրա փափաքը։ ՊՁԱ (=1432) Թուին այս Մկրտիչը (Փիրդ. եր. 101. ծան. 2. շփոթում է սորան Օրբելենցի հետ), Թովման եւ սորա աշակերտ Յովհաննէս եպիսկոպոսը Ռատուածատուր վարդապետի դամբարանի վերայ գերեզման են շինում. ՊՁԹ (=1440) Թուին Ներսէս գրիչը խնդրում է յիշել «եւ երկ՞րպ երախտաւորին (առաջինը իւր ուսուցիչ Թովման է) իմոյ հոգեւոր հօրն Մկ՞րտչ վ՞ղպի». ՊՂ Թուականին սա եւս մասնակից էր Էջմիածնի ժողովին Թովմայի հետ իբրեւ Մեծոփայ վանքի ներկայացուցիչ։ Տես. Նոր Նիւթեր. Եր. 756. 757, 759. 763, 765. (19. 20. 22. 26. 28)։ Հեռ. Ս. Էջմ. Մատ. № 1429/1419, 81ա. 201բ. 263ա. յիշատակարանները։ Փիրդ. Նօտարք 100. Կոստանեանց. Թովմա Մեծ. Յիշատ. 52.

3. Մկրտիչ վարդապետ Օրբելենց. Թովմայի «սիրելին». Տ. Յուսկան վանահայրը. որ կոչուած է նաեւ Բերկրցի։ Սորա հայրն էր Օրբէլ, ուստի եւ «Օրբէլենց» է կոչուում Թովմայի կողմից եւ մայրը Դավլաթ։ Կիրակոս Բանասէրը սրան անուանում է «Մկրտիչ վարդապետ Աւդուրլենց». իսկ Դաւիթ Բաղիշեցին «Ողբեկենց»։ Նա ՊԿԴ (=1414) Թուին գրել է տուել Տաթեւացու Սաղմոսաց մեկնութիւնը։ ՊԿԷ (=1418) Թուին ոմն Յակոբ գրիչ, որ Տ. Յուսկան անապատում գրել է մի ծաղկազարդ աւետարան, յիշել է խնդրում եւ «վերախտաւոր հայրն մեր զՄկրտիչ վարդապետ, առաջնորդ սուրբ ուխտիս»։ ՊԿԹ (1420) Թուին Մկրտիչ վարդապետն ինքը գրել է մի աւետարան, մի երկրորդը ՊՀԴ (=1423) Թուին. ՊՁԱ (1432) Թուին գրել է տուել մի Մաշտոց Կարապետ «հանճարեղ եւ իմաստուն քարտուղարի» ձեռով։ Յիշատակարանի մէջ իրեն անուանում է «անարգս ի պարս վարդապետաց. յետինս ի քարոզողաց... Մկրտիչ սոսկ անուն վարդապետս»։ Սա եւս ՊԾԹ (=1410) Թուին Թովմայի հետ հետեւում է Տաթեւացուն նորա կրկին վերազարծը Մեծոփ յաջողեցնելու եւ մասնակից լինում Յովհաննէս Մեծոփեցու Թաղմանը Հաւուց Թառում։ Տես. Փիրդ. Նօտարք 55.